ԱՐՁԱՆԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ք. Իջևան

17.09.2021թ.

Նախագահ՝ Գ. Ավետիսյան /դեկանի պաշտոնակատար/

Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան

Առցանց կազմակերպած նիստին մասնակցել են Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Գ. Ալեքսանյանը, Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Ա. Եգանյանը, Պ. Ասլիբեկյանը, ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախագահ Ի. Վարդանյանը, ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ Ա. Եսայանը, Հ. Մարգարյանը: Նիստը անց է կացվել zoom.us հարթակում, գիտական խորհրդի նախագահն է Գ. Ավետիսյան, քարտուղարը՝ Ա. Ալեքսանյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց Գ. Ավետիսյանը:

Օրակարգ

1. Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի քննարկում և հաստատում/ Զեկ. Գ. Ավետիսյան/:
2. Ֆակուլտետի 2021-2022 ուստարվա I կիսամյակի աշխատանքային և գիտական խորհրդի նիստերի ժամանակացույց-պլանների քննարկում և հաստատում /Զեկ. Գ. Ավետիսյան/:
3. 2021-2022 ուստարվա ֆակուլտետի մասանագիտական ամբիոնների առաջին կիսամյակի աշխատանքային պլանների քննարկում և հաստատում /Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:
4. 2021-22 ուստարվա I կիսամյակի ԿԾՊ-երի աշխատանքային ժամանակացույց-պլանների քննարկում և հաստատում:/Զեկ. Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/
5. 2022թ. բակալավրի կրթական ծրագրերով ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում/ Գ.Ավետիսյան/:

Բաց քվեարկությամբ 13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

Որոշում 1/1

¬ Հաստատել նիստի օրակարգը։

1. Լսեցին.- Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի քննարկման և հաստատման մասին /Զեկ. Գ. Ավետիսյան/։

Գ. Ավետիսյանը հաղորդեց, որ ֆակուլտետի գիտական խորհրդի կազմում կան որոշակի փոփոխություններ: Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ հուշագիր է կնքել ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի հետ, համատեղ իրականացվում է «Ֆինանսներ» /ըստ ոլորտի/ ԿԾ-ը և նպատակահարմար է գիտական խորհրդի կազմում ընդգրկել ԿԲ ներկայացուցիչ: Գ. Ավետիսյանը առաջարկեց գիտական խորհրդի կազմում ընդգրկել ՀՀ ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի տնտեսական հետազոտությունների վարչության ընդհանուր հետազոտությունների բաժնի պետ Գ. Մինասյանին: Նա նշեց, որ փոփոխություններ կան նաև ուսանողների կազմում:

Գ. Ավետիսայնը նախ հիշեցրեց գիտական խորհրդի ձևավորման կանոնակարգային պահանջները, ըստ որի ֆակուլտետի գիտական խորհուրդը կազմվում է ի պաշտոնե, հրավիրյալ և ընտրովի անդամներից:

Այնուհետև Գ. Ավետիսյանը ներկայացրեց գիտական խորհրդի կազմը, առաջարկեց քննարկել և ներկայացնել հաստատման հետևյալ կազմով.

1. Ավետիսյան Գայանե Հրաչիկի- ֆակուլտետի դեկանի ժ/պ, տ.գ.թ., դոցենտ, խորհրդի նախագահ,
2. Ալեքսանյան Անժելա Գրիտելի - Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ, խորհրդի քարտուղար,
3. Հովհաննիսյան Գուրգեն Ժորժիկի - Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ, ա.գ.թ., պրոֆեսոր,
4. Միքայելյան Միքայել Վարազդատի - Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի ժ/պ, տ.գ.դ., պրոֆեսոր
5. Ասիլբեկյան Պավել Նորիկի - Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ, ֆակուլտետի արհեստակցական միության նախագահ,
6. Սարիբեկյան Անուշ Աղաջանի - Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ, «Ֆինանսներ /ըստ ոլորտի/» կրթական ծրագրի ղեկավար,

7. Ուլիխանյան Ալինա Վոլոդյայի - Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ, «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի ղեկավար,
8. Պոտոսյան Ակսել Հարությունի - Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի պրոֆեսոր, ա.գ.թ.
9. Մարգարյան Հասմիկ Գառնիկի - Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.
10. Եգանյան Արփինե Բաբկենի - Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դասախոս,
11. Մինասյան Գևորգ Էդիկի - ՀՀ ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի տնտեսական հետազոտությունների վարչության ընդհանուր հետազոտությունների բաժնի պետ,
12. Ալեքսանյան Գոռ Փարսադանի - Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալության հիմնադիրների խորհրդի նախագահ,
13. Վարդանյան Իրա Հրայրի - «Ֆինանսներ /ըստ ոլորտի» կրթական ծրագրի չորրորդ կուրսի ուսանողուհի, ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ,
14. Եսայան Անահիտ Ժիրայրի - «Ֆինանսներ /ըստ ոլորտի» կրթական ծրագրի երկրորդ կուրսի ուսանողուհի, ֆակուլտետի ՈՒԽ նախագահ,
15. Բարսեղյան Աստղիկ Նորայրի - «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի I կուրսի ուսանողուհի, կուրսի ավագ,
16. Սանթրոսյան Հերմինե Արտակի - «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի II կուրսի ուսանողուհի:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 23 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Հավանություն տալ ֆակուլտետի գիտական խորհրդի կազմը և ներկայացնել տնօրենի հաստատմանը:

2. Լսեցին.- Ֆակուլտետի 2021-2022 ուստարվա I կիսամյակի աշխատանքային և գիտական խորհրդի նիստերի ժամանակացույց-պլանների քննարկման և հաստատման մասին /Զեկ. Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ դեռևս չունի հաստատված ռազմավարական ծրագիր, այն գտնվում է մշակման փուլում, սակայն ֆակուլտետի աշխատանքները արդյունավետ կազմակերպելու համար մշակվել է աշխատանքային պլան:

Նա ներկայացրեց ֆակուլտետի 2021-2022 ուստարվա I կիսամյակի աշխատանքային և գիտական խորհրդի նիստերի ժամանակացույց-պլանները:

Գ. Ավետիսյանը նշեց, որ ֆակուլտետի գիտական խորհրդի աշխատանքային պլանի կազմման նպատակը ֆակուլտետի գիտական խորհրդի գործունեության կանոնակարգումն է: Այդ փաստաթուղթը շեշտադրում է այն խնդիրները, որոնք ընթացիկ ուսումնական տարում կլինեն ֆակուլտետի գիտխորհրդի գործունեության առանցքում: Այն թույլ կտա ավելի ուղղորդված և համակարգված իրագործել ֆակուլտետի աշխատանքները: Ֆակուլտետի համար առաջնահերթ նշանակություն ունեցող այս փաստաթղթի մշակումը կհանգեցնի մյուս օղակների, մասնավորապես ամբիոնների, աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը: Այնուհետև զեկուցողը ներկայացրեց ֆակուլտետի գիտական խորհրդի 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի նիստերի պլան-ժամանակացույցի նախագիծը /նախագիծը կցվում է/

Միաձայն կողմ քվեարկելով՝ գիտական խորհրդի կազմը հավանության արժանացրեց 2021-2022 ուստարվա ֆակուլտետի աշխատանքային և գիտխորհրդի նիստերի ժամանակացույց- պլանները:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.8 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.-

-1. Հավանություն տալ Ֆակուլտետի 2021-2022 ուստարվա I կիսամյակի աշխատանքային ժամանակացույց-պլանին և ներկայացնել տնօրենի հաստատման

-2. Հաստատել Ֆակուլտետի 2021-2022 ուստարվա I կիսամյակի գիտական խորհրդի նիստերի ժամանակացույց-պլանը:

3. Լսեցին.- 2021-2022 ուստարվա ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների առաջին կիսամյակի աշխատանքային պլանների քննարկման և հաստատման մասին /Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:

Ամբիոնի վարիչները ներկայացրեցին ամբոնների 2021-2022ուստարվա առաջին կիսամյակի աշխատանքային պլանները: Նրանք նշեցին, որ ամբիոնների աշխատանքային պլանները բխում են ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի աշխատանքային պլանից:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշում- Հաստատել Տնտեսագիտություն Ֆակուլտետի «Ընդհանուր տնտեսագիտություն» ու «Տուրիզմի կառավարման և մշակութաբանություն» ամբիոնների 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի աշխատանքային պլանները:

4.Լսեցին. 2021-22 ուստարվա I կիսամյակի ԿԾՊ-երի աշխատանքային ժամանակացույց-պլանների քննարկման և հաստատման մասին: /Զեկ. Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/

Կրթական ծրագրի ղեկավարները ներկայացրեցին 2021-2022ուստարվա առաջին կիսամյակի աշխատանքային պլանները: Նրանք նշեցին, որ աշխատանքային պլանները բխում են ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի աշխատանքային և գիտական խորհրդի նիստերի ժամանակացույց պլաններից:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշում- Հաստատել Տնտեսագիտություն Ֆակուլտետի 2021-22 ուստարվա I կիսամյակի ԿԾՊ-երի աշխատանքային ժամանակացույց-պլանները :

5. Լսեցին.- 2022թ. բակալավրի կրթական ծրագրերով ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկան մասին/ Գ.Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը ներկայացրեց 2022թ բակալավրի կրթական ծրագրերով ընդունելության մասնագիտությունների ցանկը: Նա նշեց, որ վերջին տարիներին «Ֆինանսներ»/ըստ ոլորտի/ և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերով ունեցել ենք և դիմորդների և ընդունված ուսանողների թվի աճ: Նա խոսեց այսօր աշխատաշուկայում առկա տենդենցների մասին: Առաջարկեց քննարկումները ծավալել նկատի առնելով աշխատաշուկայում ձևավորված պահանջները: Այսօր աշխատաշուկայից ստացվող ազդակները վկայում են, որ «Ֆինանսներ»/ըստ ոլորտի/ և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերը ունեն պահանջարկ:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.10 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Հավանություն տալ 2022թ. բակալավրի կրթական ծրագրերով ընդունելության մասնագիտությունների ցանկը և ներկայացնել ՈՒՄՎ հաստատմանը:

Գիտական խորհրդի նախագահ՝ Գ. Ավետիսյան
Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան